ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՊՐՈՖ.—ԴՈԿՏ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՕՐՈՒ ԵՎ ՄԻՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

Ըստ մի հոդվածում, որ ունի «Նոր վավերագրեր Պետրոս Մեծի ժամանակաշրջանի հայ-ռուս բարեկամական հարաբերությունների մասին» *խորագիրը և տպագրվել է «Էջմիածին» ամսագրի 1946 թվի № 2—3-ում, հաղորդել ենք մեր և մեր ընկերոջ՝ պատմական գիտությունների թեկնածու Դ. Գաբրիելյանի կողմից Մոսկվայի կենտրոնական արխիվներում հայտնաբերված հայ-ռուսական հարաբերություններին վերաբերող մի շարք արժեքավոր վավերագրերի մասին և նրանցից որոշ մեջբերումներ արել։ Նկատի ունենալով, որ այդ վավերագրերը կարևոր են հայ ժողովրդի պատմության համար, ուստի և անհրաժեշտ ենք համարում նրանք մաս առ մաս հրատարակել «Էջմիածին» ամսագրում՝ «Նորահայտ վավերագրեր հայ-ռուսական հարաբերությունների պատմության համար» ընդհանուր վերնագրի տակ։*

***

«Էջմիածին» ամսագրի ներկա համարում մենք հրատարակում ենք երեք վավերագիր, որոնցից երկուսը առընչվում են Իսրայել Օրու, իսկ մեկը՝ նրա գործակից Մինաս վարդապետի գործունեությանը հետ։

Օրու վավերագրերից առաջինը—նրա 1704 թվի փետրվարի 2-ին ռուսերեն լեզվով գրած դիմումն է Պետրոսի արքունիքին։ Դիմումի մեջ չնայած չի հիշված հասցեատիրոջ անունն ու պաշտոնը, սակայն մի քանի կողմնակի ակնարկներ իրավունք են տալիս մեզ հաստատապես ասելու, որ Օրու դիմումն ուղղված է եղել ոչ թե Պետրոսին, ինչպես կարծել ենք մենք առաջ, այլ կանցլեր Գոլովինին։

Օրին իր դիմումի մեջ ռուսաց արքունիքից խնդրում է՝ իրեն տրված օրապահիկը, իր բացակայության ժամանակ տալ իր գործակից Մինաս վարդապետին, որին նա թողնում է Մոսկվայում, որպեսզի վերջինս միջնորդի դեր կատարի Հայաստանից եկած պատգամավորների և ռուսաց արքունիքի միջև, ինչպես և Հայաստանից ստացված տեղեկությունները իրազեկ դարձնի արքունիքին և իրեն։ (Ինքը պատրաստվել է մեկնել արտասահման, այցելելու Պֆալցի Կուրֆյուրստ Հովհան-Վիլհելմին և իր ընտանիքին։

Նույն դիմումի մեջ Օրին արքունիքից խնդրում է թույլ տալ իրեն որոշ չափով մուշտակեղեն վերցնել Պֆալցի Կուրֆյուրստի համար, որը, Օրու ասելով, սիրահար է եղել հազվագյուտ նման ապրանքների։

Այնուհետև, Օրին իր այդ նամակում պատրաստակամություն է հայտնել՝ իր հետ վերցնել մի քանի ռուս գրագիրներ՝ արտասահմանում մասնագիտացնելու ֆրանսերեն լեզվի մեջ, խոստանալով նրանց տեղավորել ա՛յն դպրոցում, ուր սովորելիս են եղել իր երեխաները և Ռուսաստան վերադառնալու ժամանակ, իր ծախսով, նրանց հետ բերել։

Օրու այս վավերագիրը արժեքավոր է պատմագիտության համար այն տեսակետից, որ նա նոր լույս է սփռում Օրու ռուսաց արքունիքի հետ ունեցած անձնական փոխհարաբերությունների որոշ մանրամասնությունների վրա։

Օրու երկրորդ վավերագիրը՝ Նիազովայում, 1712 թվին, Պարսկաստանի իր դեսպանությունից վերադառնալու ճանապարհին նրա կազմած արձանագրությունն է իր շքախմբի անդամներից մեկի՝ կապիտան Զաքարե Վիշտոկի գողացած ապրանքների կապակցությամբ։ Արձանագրությունը կազմված է 1712 թվի ապրիլի 8-ին։

Օրու կազմած այս արձանագրությունը հետաքրքրական տեղեկություններ է պարունակում այն ժամանակ գործադրվող պատժի ձևերի, դատաստանի, ինչպես և Օրու Պարսկաստանից բերած որոշ ապրանքների մասին։ Ուշադրության արժանի է նաև այն, որ այդ արձանագրության տակ ստորագրել են Հաղվանից Եսայի կաթողիկոսը և Օրուն ուղեկցող բարձրաստիճան այլ հոգևորական անձինք։

Մինաս վարդապետի անվան հետ կապված վավերագիրը՝ Եկատերինա առաջինին նրա գրած ընդարձակ զեկուցագիրն է, որի մեջ նա անդրադառնում է Օրու և իր, տարիների ընթացքում, ռուսաց արքունիքի հետ վարած բանակցություններին, շեշտում է Պետրոս առաջինի բարյացակամ վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ և խնդրում, որ կայսրուհին շարունակի նախկին հոգատարությունը հայերի և վրացիների նկատմամբ, որոնք հոգով նվիրված են ռուսաց և իրենց ազատագրությունը նրանցից են ակնկալում։

Մինաս վարդապետը, իր այս գրության մեջ, մանրամասն նկարագրել է նաև պարսիկ ու տաճիկ իշխող շրջանների անբարյացակամ վերաբերմունքը դեպի Անդրկովկասի քրիստոնյա երկու ժողովուրդները՝ հայերը և վրացիները։ Մինաս վարդապետի տեղեկություններից երևում է, որ հայերի և վրացիների ռուսասիրությունը հայտնի է դարձել պարսից և տաճկաց կառավարող շրջաններին և նրանք, դրանից զայրացած, ամեն տեսակ վայրագություններ սկսել են անել Անդրկովկասում։

Իր այդ զեկուցագրի վերջում Մինաս վարդապետը շարադրել է իր ստվերագիր ծրագիրը՝ թե ի՛նչ եղանակներով կարելի է հայ և վրաց ժողովուրդներին քաջալերել, խրախուսել։

Մինաս վարդապետի այս զեկուցագիրը հայ-ռուսական հարաբերությունների պատմության համար բացառիկ արժեք ներկայացնող վավերագիր է. նա, փաստորեն, ամփոփումն է հանդիսանում Օրու, իսկ հետո՝ Մինաս վարդապետի ուղիղ քառորդ դար ռուսաց արքունիքի հետ վարած բանակցությունների։

Ստորև տալիս ենք նշված վավերագրերը։

1. ՕՐՈՒ ՆԱՄԱԿԸ ՊԵՏՐՈՍԻ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ

ПОДАЛ ИСРАИЛЬ ОРИЙ

Благодарю Его царское пресветлое величество всемилествейшего государя и Ваше превосходительство, что изволили меня пожаловать чего я прошал, за то, что я с моими людьми буду беспрестанно благодарить.

Благодаря же Его царское пресветлое величество и Ваше превосходительство, что изволили мне давать жалованье на прокормление, покамест я был в Москве. Нужно же здесь по от'езде моем покинуть игумена Минаса Вартапета, для того, что когда приедут люди из нашей земли, для тех же дел, что мы приехали, чтоб докладывал Вашему превосходительству, и чтоб он ко мне писал о поведении. Теперь мочи нету чем ему помогать, кроме жалованья великого государя Его превосходительства, корм, который мне был 5 алтын на день, чтоб пожаловали давали на прокормление ему же Вартапету к прежнему его корму. При нем же, вартапете, оставляю я толмача своего, да два человека, да повара и лошадь, и чтоб оставленным людям и лошади давано всемилостивейшего государя жалованья, почему давано было при мне.

Еще же прошу всемилоствейшего государя Его царского величества и Вашего превосходительства, дабы пожаловано было нижеявленные вещи, понеже пресветлейший электор любит вещи, которые редкие суть на свет, как сибирские мяхкие рухляди. Милости прошу у великого государя и у тебе, чтоб даны мне были, хотя не по большому: соболи, белые медведи, лисицы черные и белые, горностаи, белки, барсы и бобры, что курфистр покрывает лошадей своих, хотя всего понемногу. И понеже курфистр муж благороднейший, за что Вашему превосходительству воздать может, о чем я должен попечение имети всеусердно.

И буде Ваше превосходительство изволите каких приказных людей для учения французского языка послать двух или трех человек со мною, я рад взять их и отдавать их в школу, где и мои дети учатся, и назад сюды возвращаяся, возьму опять их с собою все на моих проторях.

И буду радеть о том, чтоб мне дело сделав, как скорее возвратиться назад на службу Великого государя. Прошу Вашего превосходительства благоволите мне поверити, что я сие дело, за которым буду ныне вседушно рад совершити и исполнити, как и время то впредь покажет.

Вашего превосходительства
нижайший раб ИЗРАИЛЬ ОРИЙ.
(Israël Ory)

На Москве
Февраля во 2-ой день
1704 года.
(ГАФКЭ, ф. Армянские дела за 1704 год, № 1, л. 19).

ՆԱՄԱԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻՆ

Շնորհակալ եմ Նորին Կայսերական Գերափայլ Մեծություն Ամենաողորմած Թագավորից և Ձերդ Գերազանցությունից, որ բարեհաճել եք ինձ շնորհել այն, ինչ ես խնդրել էի, որի համար ես, իմ մարդկանց հետ, հավիտյանս շնորհապարտ պիտի գտնվեմ։

Նորին Կայսերական Գերափայլ Մեծության և Ձերդ Գերազանցության շնորհիվ կարգադրվել է նշանակել ռոճիկ պարենի համար՝ որքան ժամանակ ես գտնվում էի Մոսկվայում։ Բայց իմ գնալուցս հետո հարկավոր է թողնել այստեղ Մինաս վարդապետին, որպեսզի եթե մեր երկրից մարդիկ գան այն գործով, որի համար մենք եկել ենք, զեկուցանի Ձերդ Գերազանցությանը, ինչպես և ինձ իրազեկ դարձնի։ Այժմ ես նրան օգնելու ուրիշ միջոց չունեմ, քան Նորին Կայսերական Մեծության Գերափայլ Թագավորի ռոճիկը։ Ուստի և խնդրում եմ Ձերդ Գերազանցությունից, որպեսզի այն օրապահիկը, որը սահմանվել է օրական 5 ալտին, թույլատրվի տալ հիշյալ վարդապետին որպես օրապահիկ՝ իբր հավելումն նրա նախկին օրապահիկի։ Այդ նույն վարդապետի մոտ ես թողնում եմ նաև իմ թարգմանիս, երկու մարդկանց և խոհարարիս ու ձիս, և (խնդրում եմ) որպեսզի թողնված մարդկանց և ձիուս տրվի Ամենաողորմած Թագավորի օրապահիկը, որը տրվում էր նրանց իմ այստեղ եղած ժամանակ։

Դարձյալ խնդրում եմ Կայսերական Գերափայլ Մեծություն Ամենաողորմած Թագավորից և Ձերդ Գերազանցությունից, որպեսզի թույլատրվի (տանել) հետևյալ իրերը, որովհետև Գերափայլ էլեկտորը սիրում է այնպիսի իրեր, որոնք հազվագյուտ են, ինչպիսին սիբիրական փափուկ մուշտակեղենն է հանդիսանում։ Խնդրում եմ Մեծ Թագավորից և Ձերդ Ողորմածությունից՝ թույլ տրվի, թեկուզ և քիչ քանակով, տանել հետևյալը՝ սամույրների, սպիտակ արջերի, սպիտակ և սև աղվեսների, կզաքիսների, հովազների, սկյուռների և ջրաշների մուշտակներ, որոնցով Կուրֆյուրստը սիրում է ծածկել իր ձիաներին՝ թեկուզ և փոքր քանակությամբ։ Կուրֆյուրստը ազնիվ մարդ է, և դրա համար Ձերդ Գերազանցությանը վարձահատույց կլինի, որի համար ես պարտավոր եմ փութեռանդ հոգ տանել։

Եթե Ձերդ Գերազանցությունը կամենում է ֆրանսերեն լեզուն ուսանելու համար երկու-երեք գրագիրներ ուղարկել ինձ հետ, ես ուրախ կլինեմ նրանց վերցնել հետս և տալ սովորելու այն դպրոցը, ուր իմ երեխաներս են սովորում, և վերադարձիս հետ բերել իմ ծախսով։ Ես ուրախ կլինեմ, որ գործը գլուխ բերելուց հետո, շուտ հետ վերադառնամ Մեծ Թագավորի ծառայությանը։

Խնդրում եմ, որ Ձերդ Գերազանցությունը հաճի հավատալ, որ այն գործը, որը ես պիտի ձեռնարկեմ, հոգով ուրախ եմ կատարելու, ինչ որ ցույց կտա ինքը՝ ժամանակը։

Ձերդ Գերազանցության ստորնագույն ստրուկ՝

ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ

(Israël Ory)

Մոսկվա,

«2» փետրվարի 1704 թ.

2. ԱՐՔԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԻՍՐԱՅԵԼ ՕՐՈՒ ԳՈՂԱՑՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

Հրամա(ն)աւ մեծ թագաւորին Մոսկովու՝ Պետրոս Ալեքսանոսի։

Պատճառ գրոյս այս է։ Ես, Էլչի Իզրայէլ Օռիս, որ Շամախի էի, Դ (4) անգամ մեծ գողութիւն եղև իմ տանն։ Յորժամ կիրակի օրերն պատարագ գնայի, եկած ժամանակն տեսնէի, որ թագաւորական ապրանքէն շատ իբմին[1] վէր առած։ Այս պատճառէս, Ղամպար անուն արապն բռնեցի, հափս արի[2], երկու անգամ ղամչի տալ տուի, երեք անգամ սրտին կլրակ տուի[3]։ Նա էլ վախուն և ցաւի կսկծոյն, շատ թուրքեր մատնեց։ Զնոքա էլ բերի զնճիլն տրի[4]։

Երեք անգամ գողութիւն անցաւ։ Զորրորդումն, օրն կիրակի, պատարագէն եկի տեսայ իբմին վէր առած։ Էլվի թաւթիշ արի[5]։ Ասացին՝ թէ մեծ տիլմաճ[6] Ավտն այսօր ի քո օտումն[7] տեսել են։ Զնա էլ բռնեցի զնճիլն տրի։ Իր օտէն տեսայ՝ մէկ իբմին չկայր։ Յետոյ շատ տանջանք տուի, կամէի, որ սրտին կրակ տամ։ Էս վախտումն, մեզանէ մօտի խալղն[8] իւրեանց միջումն ասել ին, թէ կափիտանին կինն ծածուկ շատ իբմին է առնում քաղաքումս։ Խօսքն մեզ հասաւ։ Էս բանին վրայ թաղափուլ[9] տուի։ Զաքարէ Վիշտօկ կափիտանն Գանջայ էի ուղարկել, նա էլ եկաւ Գանջու։ Ոչինչ չունէր. Ը (8) թուման պարտք էր արել Գանջայ, որ Շամախի ես ի տուել։ Հիմա գալ բանին Լ—Խ (30—40) թուման խրիտ[10] մէկ տեղաց արաւ Շամախի ծածուկ՝ էն որ ղահվայ[11], էն որ որոշ (ի)բիմին։ Ամէն խալղ իմացան, որ մեր գողն նոքա են։ Զէրա[12]

---

1. իբմին— բան
2. հափս անել— բանտարկել
3. ղամչի տալ (մտրակով ծեծել), սրտին կրակ տալ— պատժի ձևեր էին
4. զինճիլ դնել— շղթայով կապել
5. թաւթիշ անել— հարցաքննել
6. տիլմաճ— թարգմանիչ
7. օտա— սենյակ, հարկաբաժին
8. խալղ— բազմություն, մասսա
9. թաղափուլ տալ— հարց ու փորձ անել
10. խրիտ— առևտուր
11. ղահվա— սուրճ
12. զէրա— որովհետև

կինն ծածուկ գոտն էր բացել մեր ներսի օտին վերայ, թագաւորական ապրանքն գողացել։

Հէնց որ բանն այսպէս եղաւ, ես էլ Շամախի աշքար շարի՝ պատճառն այն, որ չլինի թէ փախչեն թուրքաց իմամն մտնում[13] և կամ հաւատն ուրանան, թագաւորական ապրանքն կորչի և հաւատոյ պակասութիւն լինի։ Ապա որ եկինք Նիազովայ, տեղն հազիր եղած ջամիաթին[14] հետ, մուշավարայ արի[15], իմ կորուստն նշան նշան յառաջ ասացի, սիահի արին երկու կերպիւ, որ է փռանկի և ըռուսի գրով, որ է այսինչ.

Ի ՌՃԾԹ (1710) թուիս, յուլիս ամսոյ ԺԳ-ումն (13-ին), օրն կիրակի, պատարագէն եկի տեսայ իմ օտէն մտած և սանտուղն բացած։ ԻԳ (23) թուման փող մէկ կտաւի քսակով, երեք ոսկի ճօհարով՝ գլխի ճղայ[16], երկուսն՝ երեք երեք ճղնի, մէկն՝ միատակ մէկ ճղնի, երեք մանր քսակ ղումաշ ջոթ[17], ներսի մումիայ մհրած[18] մէկն տիւանապէկի[19] մհրովն, մէկն ղուլլար աղասի[20] մհրովն, մէկ(ն) մնշքար պաշի[21] մհրովն, որ Պէճան պէկովն էին ուղարկել մեզ։ Այս ամէնն մէկ տեղաց վէր առած։

Յուլիս ամսոյ ԻԶ-ումն (26-ին) պատարագէն եկի տեսայ է (7) թուման փող վէր առած։

Օգոստոս ամսոյ Ը-ումն (8-ին), օրն կիրակի, պատարագէն եկի տեսայ՝ ԺԹ (19) թուման փող մէկ մորթի քսակով, Բ (2) թուման թաք շահի փող[22] մէկ թոր քիսով, ԳՌ (3,000) շահի ըռուսի թագաւորի փող, ԺԲՌ (12,000) կտրած ապատի փող, մէկ ոսկի խանջալ, տաստան հակի տանտան[23], մէկ ոսկի դանակ տմշխի, մէկ քամարի արծաթէ չափռաստ, Գ (3) ոսկի գինտ փոքր ճօհարով, Գ (3) ոսկի մատանի՝ մէկն սալթ[24] ոսկի, մէկին շորս բոլորն մանր ճօհար, մէկին վրայ Գ (3) մանր ճօհար։ Տեսայ այսքանս մէկ տեղաց վէր առած։

Օգոստոսի ԺԱ-ումն (11-ին) տեսայ Թ (9) թուման, ԳՌ (4,000) փող և այլ մանր իրմին վէր առած, որ ո՛չ գրումն գրած էր և ո՛չ մտացս կայր, որ հիմա գրէի։

Իսպահան քաղաքումն իմ օտիցն կորաւ Գ (3) մուշկափաթան[25] հնդստանու ջոթ, Գ (3) շալ ղութնի[26] ջոթ։ Այս է իմ կորած թագաւորական ապրանքն, որ սիահի արի[27] ներքոյ գրեալ շամիաթի ասաջևումն։

Մենք, Նիազովայ եղեալ ջամիաթս՝ ըռուս, հայ, փռանկք և այլազգ, որ տեղս հազիր էինք, ես Սայիր Կաթողիկոս Աղուանից, ես Յոհան վարդապետս, ես Խաչատուր վարդապետս, ես ըռուսի քահանայ Վասիլի Վէտէնիք, ես Յակոբ Տիմաֆէվիչ՝ տվորնին թագաւորական մեծ պուղին վրայ, ես Միրէլ Իսանովիճ Կլաթկով՝ տվորնին փոքր պուղին վրայ[28], ես մեհմանտար[29] Պեճան պէկս, ես փրէր[30] Յառիս, որ եմ ճզվթի ասնափս[31], ես եազիչի[32] Սիմոնէրս, ես մաճառ Սիմոն Վինթրս և ես Աբրահամս, որ հակերն մեք ենք բանում։

Մեք վերոյ գրեալ ջամիաթս, Նիազովայ էինք, որ էլչի Իզրայէլ Օռին Շամախու եկաւ, ասաց թէ՝ թագաւորական այսչափ ապրանք է կորել Շամախի, ապա մալում[33] է, որ իմ գողն Զաքարէ Վիշտոկն է և իւր կինն։ Մեզ հետ մուշավարայ արաւ, յառաջ իւր կորուստն սիահի արաւ մեր առջևն, որ է՝ վերոյ գրեալն։ Ապա Զաքարէ Վիշտոկն մէկ ջոկ տեղ պահեր էր, իւր կինն՝ մէկ ջոկ տեղ։ Ապա Նորա հակերն մեր առջևն ամէն բանալ երեւ, սիահի արաւ։ Մէկ հակն բացին, որ իւրեանց քնելու շոր էր և հաքնելու՝ լէհպ[34], բարձ, խրղա[35] և այլ իրմին։ Սոցա մէջն մէկ նախշուն բարձ, աստառն կարմիր կտաւ, մէջն բամբակով լիքն։ Բացին, տեսանք ներսն մէկ ոսկէ խանճալ[36] տաստան հակի տանտան, մէկ ոսկէ դանակ։ Այս մեր աչօք տեսաք այն հակումն։ Այլ և յետու բացին մէկ թայ[37] մեծ սանտուղ մէջն պղնձի աման զատ և այլ շաքարլամայ[38] մուրապայ բամբակով շինած։ Սորա մէջէն հանեցին մէկ փոքր կանաչ շալէ բարձ խոտով լիքն կարած։ Բացին, տեսանք Գ (3) ոսկի ճօհարով, ճղած ներսն, խոտումն շինած ու կարած։ Այս է մեր աչօք տեսած բանն, որ ճշմարիտն, ինչ որ տեսել ինք, գրեցինք, պարտ

---

13. իմամ մտնել— մեչիտ մտնել
14. ջամիաթ— ժողովուրդ, հասարակութիւն
15. մուշավարա անել— խորհրդակցել
16. գլխի մեկ կամ երկու ճղնի ոսկի— մեկ կամ երկու շարան ոսկի
17. ղումաշ ջոթ— թանկարժեք կերպաս
18. մումիա մհրել— կնքամոմով կնքել
19. տիւան բէկի— դիվանապետ
20. ղուլլար աղասի— պահակապետ
21. մնշքար պաշի— մեզ անծանոթ բառ է
22. շահի— հինգ կոպեկանոց
23. տաստան հակի տանտան— դաստակը փղոսկրից, փորագրված
24. սալթ ոսկի— ձուլածո ոսկի
25. մուշկափաթան— վայրի անուն է
26. ղութնի— մետաքսյա թանկագին կերպաս
27. սիահի անել— հաշվի առնել, ցուցակ կազմել
28. տվորնին մեծ պուղին վրայ, փոքր պուղին վրայ— պալատական բարձր աստիճանով և ցածր աստիճանով
29. մեհմանտար— ներկայացուցիչ
30. փրեր— ֆրեր, եղբայր
31. ասնափ— դաս, համայնք
32. եազիչի— գրագիր
33. մալում է— հայտնի է
34. լէհպ— վերմակ
35. խրղա— հաստ հագուստ
36. խանճալ— դաշույն
37. թայ— հակ, բեռ
38. շաքարլամայ— հրուշակեղեն

էր մեզ ճշմարտութեան վկայութիւն տալ վասն Աստուծոյ։ Վասն որոյ գրեցինք և մհրեցինք։

Եղաւ Նիազովայ, ի ՌՃԾԹ (1710) թուին հայոց, սեպտեմբեր ամսոյ ի Ի (20) գրեցաւ։

Յիսուս Քրիստոսի ծառայ Եսայի Կաթողիկոս Աղուանից ականատես եղէ, որ առաջի իմ եղև այս բանն, որ և վկայութիւն գրեալ, ձեռամբ իմով կնքեցի։

Կնիք

Յոհան վարդապետ, առաջնորդ Եղիշեյի Առաքելոց վանքին, աչօքն իմօք տեսի թղթիս գրեալն և վկայեալ կնքեցի։

Կնիք

Խաչատուր վարդապետս աչօք իմօք տեսի և կնքեցի։

Կնիք

(ГАФКЭ, ф. Армянские дела, 1712 апр. 8, св. 91, № 5, Л. 3. Дело по челобытию армянина Минаса вартапета на капитана Захария Вичток в покраденных им папского посланника Израиля Орие пожитках).

3. ՄԻՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ԵԿԱՏԵՐԻՆԱ ԱՌԱՋԻՆ ԿԱՅՍՐՈՒՀՈՒՆ

Թվին ՌՃՀԴ (1725) օգոստոս ԺԹ (19)։

1. Թարեղոմս[39] լսում ենք, որ ամենայն կողմանէ իմացել են, որ հայքն մեծ թագաւորի շքի տակումն են, և հիմիկս այլազգիքն ամէն կողմանէ կուիւ գալիս են մեր ազգի վերայ, շատ նեղութիւն քաշում են Թուրքից և ամենայն այլազգեաց։ Եւ Լ (30) ամ է, որ մեր ազգն մեծ իմփեռայթօռի ուխտիւն և հրամանին հնազանդեալ նեղութիւն քաշում են և յոյս ունին, որ մեծ թագաւորէն ողորմութիւն լինի իւրեանց։

2. Հիմիկս ձեն կայ, և մարդ (այ) մէջ անկեալ, որ հայքն խզլպաշի[40] հետ մին դառնան, շատ ինքմին (այ) խոստացեալ՝ թե՛ մեծութիւն, թե՛ խազնայ[41], որ ինչպէս ուզենան, այնպես առնեն։ Մեր ազգն անշարժ այ մեծ թագաւորի ուխտին վրայ, հաստատ կան, կպած են։ Աստուած մի՛ արասցէ, եթէ չորս կողմից անօրէնքն գնան, չեն դիմանալ։ Վասն էս պատճառիս, որ թագաւոր չունին, կամ՝ խազնայ, ճէպախանայ[42]։ Ապա այսչափ ժամանակ որ կուիւ տալիս են, Աստուած է նոցա պահապան մինչ այսօր։ Այլ՝ ապա եթէ մին ողորմութիւն չի լինի մեծ թագաւորէն, մեր ազգն չեն կարել դիմանալ, որ դուշմանն շատացեր է, ինչպես ձեր մեծութեան յայտնի է։ Յետոյ՝ ձեր զօրացն (է)լ շատ դժուարութիւն կու լինի առանց նոցա. զէրա այն երկրների եղանիքն և ինչ սահմանքին գիտակ են, թարեղումս անօրէնքն ամենայն տեղիք իւրեանց համախոհուք բէրթ և ճանապարհերն իսպառ կու կապեն։

3. Եւ այլ Կիլանու եկած գիրն յայտնի է ձեր մեծութեան, որ էն քանի մարդիքն էն տեղն կան։ Ամէնն մեծ պէղրկանին[43] իւրեանց առևտրին ձէռ վեր առին և թագաւորի ծառայութեան են առանց տօնլղ[44]։ Ինչպէս ձեր մեծութեան հայտնի է, որ էլ փող չի մնաց, ամէնն պարտքով մեծ թագաւորին խոլլողի միջումն են մինչ այսօր, յերփ ճնտռալ[45] Մաթուշկն հասանիլն, մին սակաւ օգնութիւն արեր է, ինչպես յայտնի է ձերում մեծութեան։

4. Եւ այլ ով որ մեր ազգէ որ մեծ թագաւորի լոյս անուն լսում է, գալիս է Կիլան, իրեն ապրանքն վէր դնում է, ինքն մեծ թագաւորի սիրուն գնում է կուիւ։ Եւ իւրեանց մահն չեն ափսոս գալիս, որ լինի Աստուծով յաղթեն զտուշմանն, որ թագաւորի անունն բարձրանայ և տուշմանն հալածի։ Ինչ խազնայ կամ երաղ[46] որ ձեռ է ընկնում, իւրեանց են տալիս։

5. Եւ այլ թարեղէս յէռաչ Կիլանայ մին գիր արեկ, ինչպես ձեր մեծութեան յայտնի է։ Եւ էլ էն գրումն գրած է՝ թէ այդ կողմից մեր ազգէ քանի որ պահամ[47] կու գա կուվի սէր հաատլի մարդ, և թագաւորի հրամանաւն հետ բերես, զէրէ մեր ազգէ քանի շատ լինի, բարի է, որ ինչ տեղիք գնալն՝ թագաւորի զօրիցն մին կողմանէ խաֆիլ[48] պակասութիւն չի հանդիպի, որ լինի մեզ ամօթ։

6. Եւ այլ իմ խնդիրքն այս է մեծ թագաւորէն, երբ մեր հայերն որ կուվումն՝ ինչ ձէռ ընկնի, իւրեանց լինի, ճեպխանէն ի զատ, զէրա՝ փողի և ինչ ապրանաց սիրոյ սրտով կուիւ կու մտնան, և օվ ոք որ լսէ, սէր առեալ ամէն կողմէ, ուժ առեալ կու գան բազումք։ Ինչպէս անօրէնք անողորմայբար մեր ազինքն թալանում և գերի վարում (բնագրում՝ վարեաց— Ա. Ա.), այնպէս հրաման լինի թագաւորէն, որ ինչ զինուոր, ինչ թալան և գերի առեալն՝ իւրն լինի, ինչպէս որ անօրէնքն, այնպէս թալան առնելով զօրացան։ Երբ մեծ թագաւորն այսպէս հրաման տայ, բազում մարդիք պահամ կու լինի, և ամենայն հակառակաց դէմ պահապան։

7. Եւ այլ թարեղէս յառ(ա)ջ անչափ խնդրելոյ թէ՛ կանցիլարումն[49], թէ՛ կապինէթումն էն իմ խնդիրք բաներին ճուղապն Քևխիայ և Անտոն փոփին[50] հետ ուղարկեցիք։ Ապա ձեր մեծութեան հայտնի է, որ այն կողմի ճանապարհներն կապ

39. թարեղ— թվական, տարի, ժամանակ
40. խզլպաշ— պարսիկ
41. խազնայ— գանձ, գանձարան
42. ճէպախանա— ռազմամթերք
43. պէղրկան— վաճառական
44. տօնլղ— ոռճիկ
45. ճնտռալ— գեներալ
46. երաղ— զենք
47. պահամ լինել— հավաքվել
48. խաֆիլ— ամենևին
49. կանցիլարիա— գրասենյակ
50. փոփ— քահանա

է, մինչ այսօր խապար չկա։ Աստուած գիտէ, ողորմած հոգիլոյս թագաւորն ողորմութիւն արեց յէստի յէռաչ՝ հրամանաւ այն կողմն մարդ ուղարկեց, որ շատ ուրախութիւն եղև նոցա։ Կրկին կու խնդրեմ մին հրաման նշան տայ, որ յղման եմք այն մերայնոց, որ չի յուսահատին, զէրէ որ թագաւորն առ Աստուած փոխփոխեցաւ, կու լսեն, շատ տրտմութիւն կու լինի նոցա, կու յուսահատին։ Նորա համար մեծ թագաւորէն հրաման նշան կու խնդրեմք, որ լուսայհոգի թագաւորին խոստացեալն և անչափ աշխատանքն զուր չի կորի և իւր յիշատակն մնայ յաւիտեան որդոց որդի, և մերս քանի տարվա շարշարանք և նեղութիւն զուր չի կորի և մերս հոգոյ մեղք լինի, զէրէ մեք նոցա մեծ կայսերի աշխարհաշինութեան և քաջութեան, բարութեան աւելօք ծանուցեր եմք հանապազ։ Որ նորա անշարժ կան ի սէր թագաւորին և բազմապատիկ հասրաթ[51] կային տեսնել և ճշմարտութեամբ ծառայել մեծի արքայի։

8. Եւ այլ թվին 1701 այնոմացանէ խորհրդի նշանովն եկինք մեծ իմփեռայթօռի ղուլուղմն[52]։ Մեծ իմփեռայթօռն զմեզ ընդունեց և իւր բարի շաղավաթովն[53] պահեց մինչ այսօր։ Որ մեք էլ իւր ինչ հրաման բանին ճշմարտութեամբ կու ծառայէաք, ինչպէս ձեր մեծութեան յայտնի է։ Ապայ Աստուած մեր մեղացն բարկացաւ, որ մեր մեծաւ սհապ[54] իմփեռայթօռն առ Աստուած փոխեցաւ, կամքն Աստուծոյ է։ Ինչպէս որ այն լոյս թագաւորին ինչ հրամանին կատարեալ սիրով հնազանդէաք, նոյնպէս հնազանդ եմք մեծայգուններ իմփեռայթօռից, մեծ թագուհուն Կատերին Այլքսէվնայ և իւր բարի յիշատակացն։ Ինչպէս որ իւր տէր լոյս թագաւորն զմեզ իւր շաղավաթովն պահել է, կու խնդրեմք մեծայգուններ թագուհուն, որ նոյնպէս իւր շաղավաթ ողորմութեանն մեզ վերէն պակաս չառնէ, մեզ և մերայնոցն, որ ինչպէս մեծ իմփեռայթօռի իւր սէր առեալ կամաւ առաջի Աստուծոյ, ևս մարդկան ուխտեալ է զայն հայոց ուխտն կատարել։ Թէպէտ յէռաչ այս խորհուրդն ծածուկ էր, միայն կարծիք կառնէին, այսօր Ե (5) ամ է, որ ամենայն ազգի հռչակեալ հայտնի եղև, որ այլ հնար չէ ինչ հնարիւ ծածկել կամ բնական ճըշմարիտ խաղաղութիւն առնել։ Օրհնութիւն մեծ, շնորհակալութիւն ձեր մեծութեան, որ զայն ուխտն կատարէք, զէրէ այս երկրի տիրոջ հակառակորդքն ամէն կողմանէ անթիւ է աներևութաբար։ Եթէ Աստուծոյ ուժովն ջանք դնէք, որ այն Բ (2) ազգ՝ վրացի և հայք որ ձերում թագաւորութեան ծառայութեան պահէք, Աստուծով ամենայն հակառակորդքն միջակտուր[55] ամօթի լինելոց են։

Որ այն ամենայն հակառակաց դուռ և թայֆաներն ըստ իւրաքանչիւրս էնթի կողմն կու պահեն, որ ձեր զօրաց և յերկրի պակասութիւն չի հանդպիր Աստուծով։ Ինչպէս որ այսօր խայերը և էղթիար ունին[56] ձերում թագաւորութեան։ Եւ եթէ այն Բ (2) ազգն ձեռաց դնան, այլ յետոյ հնարք չէ տնջութիւն[57] լինիլ, որ այսօր հասեալ նոցա վաղջանն։ Եւ եթէ հոգի ելանէ, այլ ոչ դառնայ ի նոյն։ Որ նոքա բոլորովին ամէնն մինն աներևութաբար իւրեանց ինչ պէտկական զօրաց թէտէրուքն[58] կու լցուցանեն։

9. Եւ այլ աստի յառաչ, որ էս թագաւոր հրամանաւն խզլպաշն գնացել ի, յայտնի եղաւ, որ օսմանլուն և բուխարու հաճիք ընդ միմիայնս խօսք (են) տուած, որ իւրեանց կողմ Մեղէնտէրէ, Աստապատ և ինչ պիտանի տեղիք, բերթք և նաւք հաստատեն և ճանապարհքն կապեն, որ ինչ ուրիշ ազգ ֆռանկ կամ ուռուսք փութփարզքն[59] թախիլ կու գան[60], համ ձեր երկիրն քանտի կամ մէջն ամեն կողմէ զարար և անհանգըստութիւն։ Սիրով միաբան լինիք ամենայն սունիք, որ մերոյ մահմետականացն փութփարզանց է, ձեզ և մեզ պակասութիւն չի հանդիպի՝ թէ՛ ծովէ, թէ՛ ցամաքէ։

(ГАФКЭ, Ф. Армянские дела № 1, к 23, 1725 январь—июль, л. 25—26 Донесение армянского архепископа Минаса Вардапета).

51. հասրաթ— կարոտ
52. ղուլուղ— ծառայություն
53. շաղավաթ— գթություն
54. սհապ— տեր
55. միջակտուր— երկու կես, վատ իմաստով՝ խայտառակ
56. էղթիար ունենալ— իրավունք ունենալ
57. տնջութիւն— խաղաղություն
58. թէտէրուք— պատրաստություն
59. փութփարզ— կռապաշտ
60. թախիլ գալ— ներս գալ, հավաքվել